ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄԸ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԳՈՎ

ԼԻԱ ՔԱՌՅԱՆ

ՍՄԿԿ XXVI համագումարն առանձնահատուկ ուժով ընդգծեց, որ կոմունիստական շինարարության հսկայական խնդիրների հաջող կատարումը կախված է ոչ միայն ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության հնարավորություններն օգտագործումից, տնտեսության կառավարման կատարելագործումից, այլև ոչ քիչ չափով՝ աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքից, յուրաքանչյուր աշխատավորի պատվից ու խղճից։ Կոմունիստական բարոյականության այդ և մյուս գծերի դաստիարակության մեջ մեծ է սոցիալիստական մրցության դերը, որը, լինելով կոմունիստական շինարարության կարևորագույն օրինաչափությունը, կազմում է սոցիալիստական ապրելակերպի անկապտելի գիծ։ Սոցիալիստական մրցության մեջ Վ. Ի. Լենինը տեսնում էր «բանվորների գիտակցական և կամավոր նախաձեռնությունն աշխատանքի արտադրողականության զարգացման մեջ, նոր աշխատանքային կարգապահությանն անցնելու, տնտեսության և կյանքի սոցիալիստական պայմաններ ստեղծելու մեջ»[1]։

Սոցիալիզմի և կոմունիզմի շինարարության փորձը համոզիչ հաստատում է, որ սոցիալիստական մրցությունը դարձել է ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական խնդիրների լուծման հզոր արագացուցիչ։ Նշված պրոբլեմների լուծման գործում սոցիալիստական մրցության դերը հատկապես աճել է մեր օրերում։ «Հասուն սոցիալիզմի պայմաններում,— նշված է «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանի 50-ամյակի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ,— մրցությունը դարձել է ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական առաջադիմության, սովետական հասարակության հոգեկան և բարոյական ծաղկման հզոր շարժիչ։ Զարգանում է աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի շարժումը, որն իր բարերար հունի մեջ է ներգրավում աշխատավորների նորանոր միլիոններ, նրանց մեջ դաստիարակելով աշխատանքի նկատմամբ բարձր գիտակցականություն և կուլտուրա, նրանց հաղորդակից դարձնելով հասարակության և պետության կառավարման գործերին ակտիվ մասնակցությանը»[2]։ Փորձենք բացահայտել սոցիալիստական մրցության դերն աշխատավորության բարոյական դաստիարակության գործում, հատկապես երիտասարդ բանվորների, որոնք կազմում են արդյունաբերության մեջ աշխատողների մոտ կեսը։ Նկատենք նաև, որ հասարակագետ գիտնականներն ընդհանուր առմամբ միայն նոր են ձեռնամուխ լինում այդ շատ կարևոր պրոբլեմի հետազոտությանը։

Ընդգծելով բարոյական դաստիարակության բացառիկ դերը, Վ. Ի. Լենինը ուսուցանում էր, որ «ժամանակակից երիտասարդության դաստիարակության, կրթության և ուսուցման ամբողջ գործը պետք է լինի կոմունիստական մորալի դաստիարակությունը նրա մեջ»[3], որը նշանակում է յուրաքանչյուր երի-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 519։

2 «Правда», 18. III. 1979.

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 353։

տասարդ մարդու մեջ պատվաստել համամարդկային հիմնական բարոյական նորմերը, որոնք ժողովրդական զանգվածները մշակել են իրենց ամբողջ պատմության ընթացքում։ ՍՄԿԿ Ծրագրում ձևակերպված է կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսը, որը ներառում է այնպիսի բարոյական սկզբունքներ, ինչպես նվիրվածությունը կոմունիզմի գործին, սերը դեպի սոցիալիստական հայրենիքը, սոցիալիստական համագործակցության երկրները, բարեխիղճ աշխատանքն ի բարօրություն հասարակության, հասարակական պարտքի բարձր գիտակցությունը, անհաշտությունը հասարակական շահերը խախտողների նկատմամբ, կոլեկտիվիզմը և ընկերական փոխօգնությունը, հումանիստական հարաբերությունները մարդկանց միջև, ազնվությունն ու ճշմարտասիրությունը, հասարակական և անձնական կյանքում պարզությունն ու համեստությունը, փոխադարձ հարգանքն ընտանիքում, հոգատարությունը երեխաների դաստիարակության նկատմամբ, անհաշտությունն անարդարության, անազնվության, շահամոլության, կարիերիզմի նկատմամբ, ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների բարեկամությունն ու եղբայրությունը, անհաշտությունը կոմունիզմի, խաղաղության և ժողովուրդների աղատության գործի թշնամիների նկատմամբ, եղբայրական համերաշխությունը բոլոր երկրների աշխատավորների հետ[4]։

Բարոյական դաստիարակության էությունն այն է, որ կոմունիստական բարոյականության պահանջները վերածվեն յուրաքանչյուրի բարոյական արժեքի, այսինքն հասնել այն բանին, որ հատկապես այդ արժեքները դառնան մարդու արարքների դրդիչ ուժը, նրա կենսական ակտիվ դիրքորոշումը։ Այդ ամենին մեծապես նպաստում է սոցիալիստական մրցությունը։ Հենց մրցության, աշխատանքային գործունեության ընթացքում են մշակվում կոմունիստական գիտակցականությունը, բնավորության կոմունիստական գծերը, բարոյականությունն ու սովորությունները, քանի որ, ինչպես ՍՄԿԿ XXIV համագումարում նշեց Լ. Ի. Բրեժնևը, «սոցիալիստական մրցությունը մասսաների ստեղծագործությունն է։ Իր բուն էությամբ, այն հիմնված է մարդկանց բարձր գիտակցականության ու նախաձեռնության վրա»[5]։

Մեծ է «Կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսը մեր կյանքի օրենքն է» լոզունգով մրցության դերը, մրցություն, որը ծավալվել է երկրի բազմաթիվ ձեռնարկություններում։ Լիիրավ կարելի է ասել, որ ակտիվ կենսական դիրքորոշումը կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսն է գործողության մեջ։ Մոսկվայի առաջավոր կոլեկտիվներում դեռ 1960-ական թվականներին կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսի հիման վրա մշակվել է կուսակցության Մոսկվայի քաղկոմի հավանությանն արժանացած «Բանվորական պատվի օրենքը», որն այժմ մեծ դեր է խաղում մեր հայրենիքի մայրաքաղաքը կոմունիստական աշխատանքի օրինակելի քաղաքի վերածելու համար մղվող պայքարում։ «Բանվորական պատվի օրենքը» ներառում է հետևյալ դրույթները. «1. Քիչ է լինել հանձնարարված գործի լավ կատարող, պետք է աշխատել ստեղծագործաբար, հիրավի կոմունիստաբար։ Գիտելիքները և փորձը՝ գործին։ Նոր տեխնիկայի ներդրումը յուրաքանչյուրի հոգսն է։

2. Աշխատելով հանուն հասարակության, դու աշխատում ես քեզ համար։ Ի բարօրություն ժողովրդի աշխատանքը բարձրագույն երջանկություն է։

3. Աշխատանքային բոպեն ժողովրդական հարստություն է։ Գործարանում ամեն ինչ քոնն է, եղիր խնայող։

4. Քո ձեռքերով ստեղծվածը պետք է լինի լավը, սովետական՝ նշանակում է գերազանց։ Աշխատանքում խոտանը խայտառակություն է, խոտա-

---

4 «КПСС в резолюциях...», т. 8, М., 1972, с. 288.

5 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, Երևան, 1981, էջ 95։

նարարն անհարմար վիճակի մեջ է գցում ընկերոջը, կոլեկտիվին. բանվորի խիղճը խիստ է ամեն մի ՏՎԲ-ից (տեխնիկական վերահսկողության բաժին—Լ. Ք.)։

5. Շարունակ սովորիր, ուսումը հմտության մայրն է։ Ինքդ կարողանում ես՝ սովորեցրու ուրիշին։ Եթե հետ ես մնացել՝ օգնության կանչի ընկերոջդ։ Լավ է հարցնել, քան պոչում քարշ գալ։

6. Կյանքում և աշխատանքում գեղեցկություն մտցրու։

7. Փախստական արտադրության թշնամին է։ Արտադրության մեջ աշխատող յուրաքանչյուր երիտասարդի նպատակն է դառնալ գործարանի կադրային բանվոր։ Ամոթ նրան, ով տեղից-տեղ է թռչում՝ ընկած երկար ռուբլու հետևից։

8. Յուրաքանչյուր բանվոր նորեկի ընկերն է, ուսուցիչը և դաստիարակը։ Սովորեցրու այնպես, որ ո՛չ դու, ո՛չ էլ մարդիկ չամաչեն։ Մեր հերթափոխին մենք պետք է դաստիարակենք։

9. Անտարբերությունը դո՛ւրս բանվորական սրտից։ Ընկերդ սիալվել է՝ ուղղի նրան, դժբախտության մեջ է՝ օգնիր։

10. Աշխատանքում, ընտանիքում, ընկերների շրջանում հիշիր՝ դու սովետական բանվոր ես։ Մի արատավորի քո բարձր կոչումը։

11. Այնտեղ, որտեղ հայտնվել է բանվորը, տեղ չկա խուլիգանին, հարբեցողին, պորտաբույծին։

12. Դու փառապանծ աշխատանքային և հեղափոխական ավանդույթների ժառանգորդն ու շարունակողն ես։ Կոլեկտիվի պատիվը քո պատիվն է։ Դու պատասխանատու ես ամբողջ կոլեկտիվի համար, իսկ կոլեկտիվը պատասխանատու է քեզ համար»[6]։ Այժմ այդ դրույթներով են առաջնորդվում ոչ միայն Մոսկվայի, այլև մեր երկրի ուրիշ քաղաքների բազմաթիվ աշխատանքային կոլեկտիվներ։

Սոցիալիստական մրցության բարոյադաստիարակչական դերի քննության ժամանակ անհրաժեշտ է ելնել այն բանից, որ իր էությամբ մրցությունը դա մարդկանց միջև աշխատանքի հաջողությունների աղերսով ստեղծված հարաբերություն է[7]։ Այդ հարաբերությունները մի կողմից բնութագրվում են մրցողականությամբ (մրցակցությամբ), մյուս կողմից՝ համագործակցությամբ (փոխօգնությամբ)։ Այդ երկու կողմերն անհրաժեշտ է քննել անքակտելի միասնության մեջ։ Այդ միասնության խախտումը, մի կողմի կարևորության ընդգծումն ի վնաս մյուսի կարող են բացասաբար անդրադառնալ և՛ տնտեսական, և՛ դաստիարակչական խնդիրների լուծման վրա։

Սակայն պրակտիկայում այդ միասնությունը հաճախ խախտվում է։ Այսպես, շատ կոլեկտիվներ, մշակելով պարտավորությունները, գլխավորը համարում են առաջավոր դառնալը, իսկ թե ինչպես են ընթանում ուրիշների գործերը, չեն հետաքրքրվում։ Նման պրակտիկան հակասում է մրցության կազմակերպման լենինյան սկզբունքներին, խեղաթյուրում է նրա էությունը։ Եվ բանը նույնիսկ այն չէ, որ մի ձեռնարկության բարձր ցուցանիշները, տնտեսական տեսակետից պլանների գերակատարումը կարող են դառնալ անարդյունավետ, եթե կապակցված չեն մյուս կոլեկտիվների պլանների հետ, այլ նաև այն, որ մրցողականությունն ինքնին (փոխօգնությունից կտրված) չի արտահայտում սոցիալիստական մրցության ամբողջական բնույթը[8]։ Նշված ամբողջականությունը վառ դրսևորվում է հարակից ձեռնարկությունների մրցության մեջ։ ՀամԼԿԵՄ XVIII համագումարում արտասանած ճառում Լ. Ի. Բրեժնևն ընդգծեց. «Օգտակար կլիներ, օրինակ, լայնորեն արձագանքել

---

[6] «Социалистическое соревнование в промышленности СССР», М., 1973, с. 336—337.

[7] И. И. Чангли, Труд, М., 1973, с. 480.

[8] Ф. Н. Щербак, Нравственное воспитание личности в трудовом коллективе, Л., 1981, с. 26, 27.

«բանվորական էստաֆետի» սկզբունքով հարակից արտադրությունների աշխատողների մրցությանը՝ կառույցների, նախագծողների, արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության ձեռնարկությունների կոլեկտիվների մրցությանը, հնգամյա պլանով նախատեսված կարևորագույն կարողություններն ու օբյեկտները ժամանակին ու ժամանակից շուտ գործարկելու համար»[9]։ Այդ շարժման նախաձեռնողը դարձավ Նուրեկի ՀԷԿ-ը կառուցողների կոլեկտիվը։ Մրցությունը նպաստեց միավորել ոչ միայն տարբեր կազմակերպություններ, որոնք կառուցում էին հիդրոէլեկտրակայանը, այլև դրա համար սարքավորումներ առաքող կոլեկտիվները։ Ընդհանուր առմամբ այդ ստեղծագործական համագործակցությանը մասնակցեցին ավելի քան 200 շինարարական-մոնտաժային կազմակերպությունների և առաքիչ ձեռնարկությունների կոլեկտիվներ, որոնք ապահովեցին համերաշխ և համատեղ աշխատանք, ենթարկված մի նպատակի՝ Նուրեկի ՀԷԿ-ի ագրեգատների ժամկետից շուտ գործարկմանը։ «Բանվորական էստաֆետի» մասնակիցների նշանաբանը՝ «Փոխադարձ պահանջներից մինչև փոխօգնություն», այսօր վերցված է նավթագազամուղների շինարարությունում, էներգետիկայի բազմաթիվ խոշոր կառույցներում, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։ Հետամուտ լինելով պետական պլանային առաջադրանքների անշեղ կատարմանը, այն կոլեկտիվները, որոնք մրցության մեջ են մտել «բանվորական էստաֆետի» սկզբունքով, ձգտում են առավելագույնս հաշվի առնել իրենց ընկերակիցների պահանջմունքները, միմյանց օգնության էն գալիս, գտնում են լրացուցիչ ներքին ռեսուրսներ, որպեսզի հարակից ձեռնարկություններին անհրաժեշտ աջակցություն ցույց տան։ Այսպիսով, հարակից ձեռնարկությունների մրցությունը զարգացած սոցիալիզմի պայմաններում դարձել է սոցիալիստական մրցության առաջատար ձևերից մեկը։ Այն ծնվել է կյանքից, արտադրական և սոցիալական կենսական պահանջից։ Աշխատանքային մրցության այդ ձևն օգնում է աշխատանքային կարգապահությունն ամրապնդելուն, մարդկանց մեջ դաստիարակում է կոմունիստական գիտակցություն, հանձնարարված գործի նկատմամբ բարձր պատասխանատվություն, աշխատանքային ամուր բարեկամություն։

Սոցիալիստական մրցության մյուս ձևերից, որոնք նույնպես օգնում են արդյունավետ լուծել ոչ միայն արտադրական, այլև բարոյադաստիարակչական խնդիրները, հատուկ ուշադրության է արժանի երկրի ճանաչված շինարար Ն. Զլոբինի մեթոդով մրցությունը։ Այդ մեթոդը նախատեսում է շինարարական արտադրության ստորին օղակում՝ կոմպլեքսային շինարարական բրիգադում, տնտեսաշվարկի սկզբունքի կիրառում։ Բրիգադային կապալով աշխատող կոլեկտիվների նյութական խրախուսումն ուղղակի կախման մեջ է դրվում վերջնական արդյունքից՝ օբյեկտը շահագործման հանձնելուց։ Դա նպաստում է բանվորների ստեղծագործական ակտիվության աճին, աշխատանքի արտադրողականության աճի լրացուցիչ ռեզերվներ փնտրելուն, աշխատանքի և սոցիալիստական սեփականության նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի ձևավորմանը։ Այժմ երկրում այդ մեթոդով աշխատում է յուրաքանչյուր երրորդ շինարարական բրիգադ։ Շինարարության ժամկետը նրանց մոտ կրճատվել է 17—20%-ով, իսկ աշխատանքի արտադրողականությունը 23%-ով գերազանցում է ճյուղի միջին մակարդակը[10]։

Ինչպես ՀԱՄԿԿ-ի XVII համագումարում նշեց Լ. Ի. Բրեժնևը, «Միասնական կարգագրով աշխատող կոմպլեքսային բրիգադներում ձեռք է բերվում ժամանակի, աշխատանքային և նյութական ռեսուրսների զգալի խնայողություն։ Այնտեղ ավելի ամուր է աշխատանքային կարգապահությունը, ավելի

---

9 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 7, Երևան, 1980, էջ 373։

10 В. И. Полурез, Рабочий класс Украины в борьбе за выполнение решений XXV съезда КПСС, Киев, 1980, с. 80.

բարձր են վաստակները, երիտասարդ բանվորները ավելի արագ են վարպետություն սովորում։ Այստեղ, բնականաբար, ավելի բարձր է նաև աշխատանքի արտադրողականությունը»[11]։

Բրիգադային կապալը լայնորեն ներդրվում է «Երարդշինx տրեստի բոլոր շինարարական կազմակերպություններում։ Գ. Մարգարյանի ղեկավարած հարդարողների բրիգադը զլոբինյան մեթոդով է աշխատում արդեն յոթ տարի։ Դա 33 հոգիանոց համախմբված կոլեկտիվ է, որտեղ ամուր արմատավորվել է «Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի» սկզբունքը։ Մարդիկ աշխատում են նվիրումով, շահագրգռված, ձգտում են օգնել մեկը մյուսին, որպեսզի սեղմեն ժամանակը և օբյեկտը հանձնեն համաձայն նախատեսված գրաֆիկի և սոցիալիստական պարտավորությունների։ 10-րդ հնգամյակի տարիներին բրիգադում աշխատանքի արտադրողականությունն աճել է 41%-ով։ Ելույթ ունենալով ՀԿԿ XXVII համագումարում, Գ. Մարգարյանը բրիգադի հաջողության պատճառները հետևյալ կերպ բացատրեց. «բրիգադի աշխատանքի հաջողության երաշխիքը աշխատանքային միաձույլ կոլեկտիվն է, փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտը։ Մեր փոքրիկ կոլեկտիվի անդամների մեծամասնությունը համատեղ աշխատում է 15 տարուց ավելի, լավ են ճանաչում միմյանց, գիտեն իրար հոգսերի մասին, և այդ ամենը նպաստում է ոչ միայն լինել արտադրության առաջավորներ, այլև լավ օրինակ մեր երիտասարդ սերնդին աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի ոգով դաստիարակելու գործում»[12]։

Բրիգադային կապալի տարածման ուղղությամբ մեծ աշխատանք է կատարվել նաև մյուս հանրապետություններում։ Ուկրաինայում, օրինակ, 1971 թ. տնտեսաշվարկով աշխատում էր ընդամենը 40 շինարարական բրիգադ, իսկ 1980 թ. սկզբին՝ ավելի քան 13 հազար[13]։

Բրիգադային մեթոդի տնտեսական և սոցիալական էությունն այն է, որ նրանում միանում են կոլեկտիվ շահագրգռվածությունը և բրիգադի պատասխանատվությունը՝ պատրաստի արտադրանքի թողարկման համար, դարգանում են արտադրության ղեկավարման դեմոկրատական հիմունքները։ Ուստի, պատահական չէ, որ մրցության այդ առաջադիմական ձևն արագորեն տարածվում է ոչ միայն շինարարության մեջ, այլև ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում։ Այսպես, արդեն 10-րդ հնգամյակի վերջին միասնական կարգագրով աշխատող բրիգադներում միավորված էին ավելի քան մեկ միլիոն արդյունաբերական բանվորներ[14]։ Բրիգադային ձևի կազմակերպման և աշխատանքի խթանման ընդլայնում մեծ հաջողությունների է հասել, օրինակ, Կալուգայի շարժանիվների գործարանը։ Զեռնարկության կոլեկտիվը 2,5 անգամ գերազանցել է աշխատանքի արտադրողականության բարձրացման՝ երկրի մեքենաշինության միջին ցուցանիշը, գործարանում լրիվ օգտագործվում է հաստոցների համակազմը, բանվորները հասել են լիակատար փոխադարձ փոխարինման, վերացել են հարբեցողությունը և աշխատանքային կարգապահության խախտումները[15]։ Զեռնարկությունում գործում է աշխատավարձի արդարացի բաշխում, ըստ աշխատանքային մասնակցության գործակցի։ Բրիգադներն իրավունք ունեն սահմանված նորմատիվների և միջոցների սահմաններում որոշելու պարգևատրումների և աշխատավարձի չափերը, մասնագիտական վարպետության և մասնագիտությունների համատեղման համար իրենց անդամներին ներկայացնելու հավելումների և լրացուցիչ վճարումների, երաշխավորելու ադմինիստրացիային ու արհմիութենական կազմակերպությանը՝ բարձրացնելու այս կամ այն աշխատողի կարգը,

---

11 «Սովետական Հայաստան», 17. III. 1981։

12 «Սովետական Հայաստան», 25. III. 1981։

13 В. И. Полурез, նշվ. աշխ., էջ 80։

14 Նույն տեղում, էջ 75։

15 «Правда», 12. IX. 1980.

որոշելու մրցության հաղթողներին և նրանց խթանման չափերը, համագործակցությունն սոցիալիստական մրցության արդյունքներով իրենց կազմից թեկնածուներ առաջադրելու նյութական և բարոյական խրախուսման համար։ Այսպիսով, բրիգադներում արտադրության կառավարման դեմոկրատական սկզբունքները մեծ տարածում են ստացել, որը շատ բանով բնորոշում է կոլեկտիվում բարոյահոգեբանական մթնոլորտը։ Խոսելով բրիգադային կապալի առավելությունների մասին, ՍՄԿԿ XXVI համագումարի պատգամավոր, ՍՍՀՄ Կերագույն սովետի դեպուտատ, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բրիգադիր Հ. Իսրայելյանը նշել է. «Արդյունքներն ուղղակի անհավատալի են։ Պարապուրդներն իսպառ վերացել են։ Մեկը հիվանդացել է կամ ինչ որ պատճառով բացակայում է, միևնույն է հաստատն աշխատում է, քանի որ մեզ մոտ հնարավորություն կա մանևրելու անձնակազմերով։ Կարգապահությանը կնախանձեմ։ Ավելացրեք յուրաքանչյուրի շահագրգռվածությունը բրիգադի աշխատանքի վերջնական արդյունքներում. չէ որ ընդհանուր կաթսայից ենք օգտվում։ Եվ չնայած այդ կաթսայում բաժինը տարբեր է, նեղացածներ չկան, հասկանում են՝ բաժանումն արդարացի է»[16]։

Հաշվի առնելով սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման մեջ աշխատանքի խթանման և կազմակերպման բրիգադային ձևի հարաճուն դերը, ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը նախատեսել են, որ այն 11-րդ հնգամյակում պետք է դառնա հիմնական[17]։

Աշխատանքի կազմակերպման և խթանման բրիգադային ձևը նպաստում է ակտիվ կենսագործունեության ձևավորմանը, բանվորների մեջ դաստիարակում է տիրոջ զգացում։ Բացահայտելով «տիրոջ զգացում» հասկացության բովանդակությունը, Լ. Ի. Բրեժնևն ընդգծել է. «...տեր լինել նշանակում է մեծ իրավունքների հետ մեկտեղ ունենալ նաև մեծ պարտականություններ։ Դա նշանակում է մեծ պատասխանատվություն կրել ոչ միայն անձնական աշխատանքի ու վարքագծի համար, այլև կոլեկտիվի, ձեռնարկության, ամբողջ երկրի գործերի համար։ Այդ հատկությունների դաստիարակությունը, որոնք պետք է դառնան սովետական յուրաքանչյուր մարդու ներաշխարհի անկապտելի գծերը, կուսակցության ամենակարևոր խնդիրներից մեկն է կոմունիստական շինարարության գործում»[18]։ Սովետական հասարակարգն աշխատավորների մեծամասնության մեջ դաստիարակել է այդ հայրենասիրական զգացմունքը։ ՀամԼԿԵՄ Կենտկոմին կից գիտահետազոտական կենտրոնում կատարված հետազոտությունների տվյալները վկայում են, որ հետազոտված բանվորների մեծամասնությունը (նրանց գրեթե կեսը մինչև 30 տարեկան է) բավական ճշգրտ է պատկերացնում արտադրության տիրոջ զգացումը բնութագրող հիմնական գծերը։ Հարցման ենթարկվածներն առաջին պլանում են դնում այնպիսի բնութագրեր, ինչպես «բարեխիղճ աշխատելու ձգտումը», աշխատանքի գիտակցական կարգապահությունը», թերությունների կողքով չանցնելու սովորությունը։ Հարցման ենթարկվածների համարյա 90%-ը մասնակցում է սոցիալիստական սեփականության պահպանման և ռեժիմի համար մղվող պայքարին, 77%-ը՝ բրիգադի, տեղամասի, արտադրամասի, ձեռնարկության արտադրական գործունեության հարցերի քննարկմանն ու լուծմանը։ Նրանց 80%-ն անհրաժեշտ է համարում սոցիալիստական սե-

---

16 «Коммунист», 11. II. 1981.

17 «Տնտեսական մեխանիզմի հետագա կատարելագործման և կազակցական ու պետական մարմինների խնդիրների մասին։ ՍՄԿԿ Կենտկոմի 1979 թ. հուլիսի 12-ի որոշումը։ Պլանավորումը բարելավելու և արտադրության արդյունավետության ու աշխատանքի որակի բարձրացման վրա տնտեսական մեխանիզմի ներգործությունն ուժեղացնելու մասին։ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1979 թ. հուլիսի 12-ի որոշումը», Երևան, 1980։

18 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 2, Երևան, 1970, էջ 145։

փականության հափշտակումների նկատմամբ ստեղծել անհանդուրժողականության մթնոլորտ[19]։

Սոցիալիստական մրցության զարգացման, նրա դաստիարակչական դերի ուժեղացման գործում մեծ դեր է խաղում դաստիարակների շարժումը։ Այդ շարժման ակունքներն առկա են սոցիալիստական մրցության զարգացման ամենավաղ փուլերում։ Կուսակցական կազմակերպությունները մեծ ուշադրություն են նվիրում այդ հայրենասիրական շարժմանը։ Ուկրաինայում, օրինակ, դաստիարակներ են համարվում ավելի քան երեք հազար բանվոր մանկավարժներ։ Նրանց մեջ են ավելի քան 1,5 հազար Սովետական Միության և Սոցիալիստական աշխատանքի հերոսներ, արտադրության առաջավորներ և կառավարական բարձր պարգևների արժանացած նորարարներ։ Դաստիարակները երիտասարդների վրա հսկայական դրական ազդեցություն են գործում, նրանց շրջանում ունեն բարձր հեղինակություն և պատվով են արդարացնում դաստիարակի բարձր կոչումը։ Բավական է ասել, որ ենթաշեֆ երիտասարդության մեջ հասարակական կարգի և աշխատանքային կարգապահության խախտողների թիվը 3—4 անգամ քիչ է նրանց համեմատությամբ, ովքեր չունեն դաստիարակներ[20]։ Անհատական և կոլեկտիվ դաստիարակչական շարժման մեջ ակտիվ դերը պատկանում է պատերազմի և աշխատանքի վետերաններին։ Այսպես, Լենինի շքանշանակիր, պատերազմի վետերան, Լենինի անվան հայէլեկտրամեքենաշինական գործարանի հավաքող Ա. Դասպարյանը պատրաստել է ավելի քան 30 որակյալ մասնագետ։ Արտադրության տասնյակ առաջավորներ են պատրաստել Փառքի շքանշանների լրիվ ասպետ, ձուլող Ս. Ստեփանյանը, հայտնի դաստիարակներ, «Պոլիվինիլացետատ» գործարանի նորարարներ և ռացիոնալիզատորներ Զ. Հայրապետյանը, Ռ. Հովսեփյանը և շատ ուրիշներ[21]։ Դաստիարակների շարժումն ուղղված է երեք կարևոր, օրգանապես փոխկապված խնդիրների լուծմանը՝ երիտասարդ մարդուն սովորեցնել աշխատել, նրան կոփել գաղափարական և դասակարգային առումով, ներգրավել հասարակական գործունեության մեջ և, վերջին հաշվով, նրա մեջ ձևավորել կենսական ակտիվ դիրքորոշում։

Վերջին ժամանակներս ավելի ու ավելի լայնորեն է տարածվում կոլեկտիվ դաստիարակչական շարժումը, որը ներառել է սոցիալիստական մրցության լավագույն գծերը։ Այդ շարժումը դարձել է երիտասարդության մեջ կենսական ակտիվ դիրքորոշման, բարձր բարոյական և քաղաքական հատկանիշների ձևավորման գործուն միջոց։ Կոլեկտիվ դաստիարակչական շարժումն արժանացել է ՀամԿԿ-ի նախագահության և ՀամԼԿԵՄ Կենտկոմի բյուրոյի հավանությանը։ 1980 թ. միայն Կուզբասում կային 250 դաստիարակ-կոլեկտիվներ[22]։

Մեծ հոգատարություն ցուցաբերելով երկրի տնտեսության հետագա զարգացման նկատմամբ, բանվոր դասակարգը գտնում է արտադրության նորանոր ռեզերվներ, հանդես է գալիս աշխատանքի արտադրողականության բարձրացմանն ուղղված նոր նախաձեռնություններով։ Հաշվի առնելով երկրում ստեղծված դեմոգրաֆիական բարդ իրադրությունը, աշխատանքային ռեսուրսների սուր պակասը, շչեկինյան «Ազոտ» արտադրական միավորման բանվորները մրցություն սկսեցին աշխատողների քանակը կրճատելուն զուգընթաց արտադրանքի թողարկումն ավելացնելու համար՝ «Ավելի լավ, քիչ անձնակազմով» նշանաբանով։ Կարճ ժամկետում այդ կոլեկտիվն արտադրանքի թողարկումն ավելացրեց 2,7, իսկ աշխատանքի արտադրողականությունը՝ 3,4 անգամ։ Ընդ որում, բանվորների միջին աշխատավարձն ավե-

---

19 «Активная жизненная позиция молодежи», М., 1980, с. 169, 172.

20 «Правда», 23. V. 1980.

21 «Коммунист», 3. II. 1981.

22 «Активная жизненная позиция молодежи», с. 172—176.

լացավ դրեթե 1,5 անգամ, իսկ անձնակազմը կրճատվեց 1,5 հազար մարդով, որոնք աշխատանք ստացան կամ կոմբինատի նոր արտադրամասերում, կամ քաղաքի այլ ձեռնարկություններում[23]։ ՍՄԿԿ Կենտկոմը հավանություն տվեց այդ նախաձեռնությանը և կուսակցական ու տնտեսական մարմիններին կոչ արեց լայնորեն տարածել ամբողջ երկրում։ Ո՞րն է շչեկինյան քիմիկների հաջողության գաղտնիքը։ Իհարկե, այն ձեռք է բերվել աշխատատար պրոցեսների մեքենայացման, նյութական խրախուսման նոր համակարգի ներդրման, աշխատավորների որակավորման բարձրացման, արտադրության ղեկավարման բարելավման շնորհիվ։ Բայց այստեղ գլխավոր դերը խաղացել է բարոյական գործոնը, սովետական մարդու բարոյական հասունությունը, որը պարզ է հասկանում առաջադրված խնդիրների իմաստը և դրանց լուծման գործում իր պատասխանատվության բաժինը, որովհետև, ինչպես ընդգծել է Լ. Ի. Բրեժնևը, «սոցիալիստական հասարակության մեջ աշխատավոր մարդը այս կամ այն գործողությունների, այս կամ այն ցուցումների մեխանիկական կատարողը չէ։ Նրա համար կարևոր են ոչ միայն սեփական ջանքերի անմիջական արդյունքը, այլև դրանց տեղն ու նշանակությունն ընդհանուր աշխատանքային պրոցեսում։ Ընդհանուր գործում իրենց անձնական ավանդը ներդնելու ձգտումն ու հնարավորությունը աշխատանքային գործունեության հսկայական խթան են, սովորեցնում են մտածել մասշտաբայնորեն, պետականորեն, ընդհանուր հոգսերն ընկալել որպես սեփական հոգսեր»[24]։ Դրա վառ օրինակը բանվորների շարժումն է՝ ուղղված արտադրանքի նորմայի վերանայմանը։ Այդ շարժման նախաձեռնողներից մեկը Ակսայսկի պլաստմասսայի գործարանի կոլեկտիվն է։ Դրա շնորհիվ այդ ձեռնարկությունում աշխատանքի արտադրողականության միջին աճը կազմում է 14%, երկու անգամ ավելի, քան ճյուղի միջին ցուցանիշը։ Եթե նախկինում բանվորների նախաձեռնությամբ քննարկվում էին միայն արտադրանքի նորմերը, ապա այժմ՝ ելակետային ապրանքների և ծախսերի նորմերը։ Յուրաքանչյուրի պատվի գործն է դարձել մասնակցել շարժմանը, նույնիսկ տեխնոլոգիայի և աշխատանքի պայմանների բարելավման հարցերում նախորդել ադմինիստրացիայի քայլերին։ Նման մասնակցությանը կոլեկտիվի բարոյական պատրաստակամությունը վճռական դեր է խաղում։ 11-րդ հնգամյակի առաջին տարին գործարանն ավարտեց բոլոր ցուցանիշներով հանդիպական պլանի ժամկետից շուտ կատարումով[25]։

Աշխատավորներին կոմունիստական բարոյականության ոգով դաստիարակելու գործում մեծ է աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի շարժման դերը, որն իր մեջ մարմնավորում է սոցիալիստական մրցության բոլոր լավագույն գծերը։ Այդ շարժման էության և առանձնահատկությունների գիտական խոր սահմանումը տրված է սոցիալիստական մրցության առաջավորներին ՍՄԿԿ Կենտկոմի հղած ողջույնի մեջ։ Այդ շարժման գլխավոր առանձնահատկությունն այն է, որ «նրա մեջ օրգանապես զուգորդվում են նորագույն գիտության և տեխնիկայի հիման վրա աշխատանքի ամենաբարձր արտադրողականության հասնելու պայքարը և նոր՝ իր երկրի տիրոջ մարդու դաստիարակությունը, մարդ, որը շարունակ առաջ է նայում, խիզախում, մտածում, ստեղծագործում։ Շաղկապելով աշխատանքը, ուսումն ու կենցաղը, այդ մրցությունն ակտիվ ազդեցություն է գործում կյանքի ու մարդու գործունեության բոլոր կողմերի վրա»[26]։

---

23 «Передовой опыт повышения эффективности качества», М., 1977, с. 15.

24 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան ուղիով, հ. 6, Երևան, 1979, էջ 420։

25 «Правда», 6. I. 1982.

26 «К победе коммунистического труда. Всесоюзное совещание передовиков соревнования бригад и ударников коммунистического труда, 27—30 мая 1960 г.», М., 1960, с. 7.

1979 թ. աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի շարժմանը մասնակցում էր ավելի քան 60 մլն մարդ, որը նրա կենսունակության վառ ցուցանիշն է[27]։ Այդ շարժման մեջ գլխավորը նրա մասնակիցների կազմի որակական փոփոխություններն են։ Նրա մասնակիցների մեջ ավելի ու ավելի տեսանելի են երևան գալիս աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի գծերը՝ բարձր արտադրողական աշխատանքը, տեխնիկական ստեղծագործությունը, կառավարմանն ակտիվ մասնակցությունը։ Շարժման մասնակիցները հաճախ կամավոր դիմում են վարձաշափերի իջեցման (ինքնանորմավորում), ցույց են տալիս անձնազոհ աշխատանքի և նրա նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի օրինակներ[28]։ Շարժման մասնակիցների շարքերում որակական փոփոխությունների մասին է վկայում կոմունիստական աշխատանքի հարվածայինների քանակի բացարձակ աճը։

Կոմունիստական աշխատանքի հարվածայինների քանակական աճը (հունվարի 1-ի տվյալներով)[29]

Թվականներ	Կոմունիստական աշխատանքի հարվածայիններ (հազ. մարդ)	Թվականներ	Կոմունիստական աշխատանքի հարվածայիններ (հազ. մարդ)	Թվականներ	Կոմունիստական աշխատանքի հարվածայիններ (հազ. մարդ)
1959	—	1966	9921,6	1973	21287,9
1960	101,4	1967	10853,8	1974	22570,7
1961	451,6	1968	12161,8	1975	24080,8
1962	1225,6	1969	13756,4	1976	25750
1963	2259,2	1970	15572,4	1977	27652,1
1964	3653,6	1971	17913,4	1978	29144,1
1965	7979,7	1972	19600	1979	300086,2

Բազմաթիվ հետազոտությունների տվյալները վկայում են, որ աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի շարժման մասնակիցներին բնորոշ են աշխատանքային և հասարակական-քաղաքական բարձր ակտիվությունը։ Նրանց բնորոշ է նաև պարտքի, բարոյական պատասխանատվության, իր և ուրիշների նկատմամբ պահանջկոտության բարձր դգացումը։ Այդ առումով բնութագրական են Սվերդլովսկի ձեռնարկություններում կատարված հետազոտությունները։ Այն հարցին, թե նրանց կյանքում ինչ նոր բան է մտցրել կոմունիստական աշխատանքի հարվածայինի կոչմանն արժանանալը, հարցմանը մասնակցողների 39,3%-ը նշել են պատասխանատվության բարձրացումը, իսկ 15,8%-ը՝ պարտավորությունն ամենուր լինել օրինակելի[30]։ Այսպիսով, կոմունիստական աշխատանքի հարվածայինների մեծ մասն այդ կոչմանն արժանանալը կապում է կոլեկտիվում իրենց առաջատար դերի աճի հետ։

Քանի որ աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի շարժումը ներառել է մրցողների բանակի առավել ակտիվ և գիտակից մասը, այն հարստացնում է սոցիալիստական մրցության բոլոր ձևերը՝ հանրակրթական, կուլտուր-դաստիարակչական և բարոյական խնդիրների լուծման փորձով։ Դրանում կարելի է համոզվել մինչև աշխատանքի նկատմամբ կոմունիս-

---

27 «Развитой социализм и творчество масс. Актуальные вопросы теории и практики социалистического соревнования», М., 1979, с. 135.

28 Նույն տեղում, էջ 137։

29 Նույն տեղում։

30 «Духовный мир советского рабочего. Опыт конкретно-социологических исследований», М., 1972, с. 316.

տական վերաբերմունքի շարժման սկզբնավորվելը վերցված սոցիալիստական պարտավորությունները և մրցության մասնակիցների այժմյան պարտավորությունները համեմատելով։ Հարկ է նկատել, որ պարտավորությունների բովանդակության և արդյունքների հանրագումարի մեջ մրցության բարոյա-դաստիարակչական կողմերի հաշվառումը շատ նուրբ և բարդ գործ է։ Եվ ճիշտ չէր լինի դաղափարաբարոյական դաստիարակության պլանավորումն իրագործել արտադրական ցուցանիշների նման։ Այնպիսի գծերը, ինչպիսիք են պատասխանատվության, նախաձեռնողականության, գիտակցականության, թերությունների նկատմամբ անհանդուրժողականության բարձրացումը, չեն կարող գրանցվել պլանի կամ վիճակագրական հաշվետվության մեջ։ Բայց դա չի նշանակում, թե բարոյական «արդյունքներն» ընդհանրապես ենթակա չեն պլանային-նպատակամղված կարգավորման, հաշվառման և չպետք է դրվեն պարտավորությունների բովանդակության մեջ։

Առաջավոր կոլեկտիվների փորձը ցույց է տալիս, որ պարտավորություններում (և, հետևաբար, արդյունքների հանրագումարի ժամանակ) պետք է հանդես դան այնպիսի կետեր, ինչպես արտադրանքի թողարկումը միայն բարձր որակով, մասնակցությունը ռացիոնալիզատորական աշխատանքին, արտադրանորմայի կամավոր վերանայումը, արտադրության մեջ աշխատող երիտասարդի նկատմամբ շեֆությունը, հասարակական աշխատանքի կատարումը (պրոպագանդիստի, քաղինֆորմատորի, մամուլի արտահաստիքային թղթակցի, դրուժիննիկի և այլի դերում), աշխատանքի առաջավոր եղանակների փոխանցումը (կոմունիստական աշխատանքի դպրոցներում և այլ ձևերով), ըստ բնակության վայրի դեռահասների հետ աշխատանքը, մասնակցությունը սպորտային և կուլտուր-մասսայական աշխատանքներին, հանրակրթական, տեխնիկական և պոլիտեխնիկական մակարդակի շարունակ բարձրացումը, օգնության ու փոխօգնության ձևերը և այլն։

Սովետական երիտասարդության գաղափարաքաղաքական, աշխատանքային և բարոյական դաստիարակության կյանքի դպրոց է լենինյան կոմերիտմիությունը։ Ինչպես ՍՄԿԿ XXVI համագումարում նշեց Լ. Ի. Բրեժնևը, կոմերիտական աշխատանքի գլխավոր նպատակն է «նպաստել, որ կաղմավորվի քաղաքականապես ակտիվ, իրենց գործն իմացող, աշխատանքը սիրող և աշխատել կարողացող մարդկանց սերունդ, որոնք միշտ պատրաստ լինեն պաշտպանելու իրենց հայրենիքը»[31]։

Հատուկ ուշադրություն է դարձվում հերթափոխի աշխատանքային կոփմանը, քանի որ մեր հասարակության մեջ մարդու բարոյաքաղաքական հասունության մասին դատում են՝ ելնելով այն բանից, թե ինչպես է նա վերաբերում աշխատանքին։ Աշխատանքի նկատմամբ գաղափարադաստիարակչական խթանիչ մոտիվների ձևավորումը դարձել է նոր մարդու դաստիարակության կարևորագույն ուղղություններից մեկը։ Այդ մասին պերճախոս վկայում է մասնավորապես «11-րդ հնգամյակին երիտասարդության հարվածային աշխատանքն ու ստեղծագործությունը» հայրենասիրական շարժումը, որին մասնակցում են միլիոնավոր պատանիներ ու աղջիկներ։ Նրանցից յուրաքանչյուր երկրորդն աշխատում է աշխատանքի արտադրողականության բարձրացման անհատական ստեղծագործական պլանով, յուրաքանչյուր հրրորդն արտադրում է որակի բարձրագույն կատեգորիայով արտադրանք[32], ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակն արժանավայել դիմավորելու համար ծավալված սոցիալիստական մրցության։ աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի շարժման մեջ երիտասարդությունն իրագործում է

---

31 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, էջ 111։

32 «Правда», 24. I. 1982.

նուաակցության պլանները, կոփում է իր կամքն ու բնավորությունը, ձեռք է բերում քաղաքական և բարոյական հասունություն։

Այսպիսով, զարգացած սոցիալիզմի պայմաններում կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում սոցիալիստական մրցության դերն անշեղորեն աճում է։ Նրա դերը մեծ է նաև ակտիվ կենսադիրքորոշման ձևավորման գործում, որը բարոյական դաստիարակության գլխավոր նպատակն է։

СОЦИАЛИСТИЧЕСКОЕ СОРЕВНОВАНИЕ И ВОСПИТАНИЕ РАБОЧИХ В ДУХЕ КОММУНИСТИЧЕСКОЙ НРАВСТВЕННОСТИ

ЛИЯ КАРЯН

Резюме

В условиях развитого социализма роль социалистического соревнования в решении важнейших социально-экономических задач неизменно возрастает. В коммунистической нравственности велика роль социалистического соревнования, которое является важнейшей закономерностью коммунистического строительства, неотъемлемой чертой социалистического образа жизни. Нравственное воспитание личности на принципах коммунистической морали может эффективно осуществляться только в результате включения каждого человека в активную общественно-полезную материальную и духовную деятельность.